

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/5**

**23 սեպտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Զատա Հակոբյանի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 6100877 ստուգման ակտի դեմ:

### **Քաղաքացի Զատա Հակոբյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 22.07.2014 թ-ի թ-իվ 6100877 հանձնարարագրի համաձայն կատարված ստուգման արդյունքում կազմվել է 19.08.2014 թ-ի թիվ 6100877 ստուգման ակտը, որի համաձայն 2013 թ-ի հուլիս ամսվա համար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում՝ մինչև 30.06.2013 թ-ը, Ա/Ձ Զատա Հակոբյանի կողմից չի ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին թիվ 1 ձևով սահմանված հայտարարությունը: Այսինքն՝ 01.07.2013 թ-ից մինչև 31.07.2013 թ-ը աշխատել է առանց արտոնագրի:

Ըստ գանգատի, առկա է թիվ 1 ձևով նախատեսված հայտարարությունը, որը ներկայացվել է 01.07.2013 – 31.08.2013 թ.թ. ընկած ժամանակահատվածի համար արտոնագիր ստանալու նպատակով: Տրամադրված արտոնագրի համաձայն գործունեության իրականացման ժամանակահատվածը սահմանվել է հուլիս և օգոստոս ամիսները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով գանգատին կից ներկայացված փաստաթղթերը գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 6100877 ստուգման ակտը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 22.07.2014 թ-ի թիվ 6100877 հանձնարարագրի Ա/Ձ Զատա Հակոբյանի մոտ իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 19.08.2014 թ-ին կազմվել է թիվ 6100877 ստուգման ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 94.500 դրամ արտոնագրային վճար:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Զատա Հակոբյանը ք.Երևան, Տիտոգրադյան 14 հասցեում իրականացնում է վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն թվով 1 աշխատատեղով, որի ամսական արտոնագրային վճարը կազմում է 15.750 դրամ, սակայն ըստ էրեբունու ՀՏ տեղեկատվական բազայում առկա տվյալների և կատարված ուսումնասիրության արդյունքների 2013 թ-ի հուլիս ամսվա համար, համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջների, մինչև 30.06.2013 թ. ՀՏ չի ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին թիվ 1 ձևով սահմանված

հայտարարությունը: Այսինքն, 01.07.2013 թ-ից մինչև 31.07.2013 թ-ն աշխատել է առանց արտոնագրի: Արդյունքում առանց արտոնագրի փաստացի գործունեություն իրականացնելու համար ստուգման ակտով կիրառվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 94.500 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 6100877 ստուգման ակտի 1-ին կետով կիրառվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթները, որի համաձայն. «Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով»:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ տուգանքը նախատեսված է առանց արտոնագրի օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով զբաղվելու համար:

Քննարկվող դեպքում գործում առկա է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի կողմից 20.08.2013 թ-ին տրամադրված թիվ 72/210813001774 արտոնագիրը, որը տրամադրվել է Ա/Ձ Ջառա Հակոբյանին՝ հուլիս և օգոստոս ամիսներին վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելու համար: Այսինքն, թե հուլիս և թե օգոստոս ամիսների համար Ա/Ձ Ջառա Հակոբյանը ունեցել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնագիր: Հետևապես, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը, որը նախատեսված է առանց արտոնագրի արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակով զբաղվելու համար, քննարկվող դեպքում կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 6100877 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

